Հաշվետվություն
Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների հետևանքների վերացման կազմակերպման վարչության աղետների հետևանքների վերացման պլանավորման, կանխատեսումների և ծրագրավորման բաժնի ավագ հրահանգիչ, փ/ծ կապիտան Կարեն Բաբասյանի՝ Բոսնիա և Հերցեգովինա գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը:

Կարեն Բաբասյան:

2. Զբաղեցրած պաշտոնը:

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) արտակարգ իրավիճակների նախարարության (ԱԻՆ) փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների հետևանքների վերացման կազմակերպման վարչության աղետների հետևանքների վերացման պլանավորման, կանխատեսումների և ծրագրավորման բաժնի ավագ հրահանգիչ:

3. Գործուղման վայրը և ժամկետները:

Բոսնիա և Հերցեգովինայի Հանրապետության Տուզլա քաղաք, 2017թ. մայիսի 14-ից 19-ը:

4. Հրավիրող կողմը:

ՆԱՏՕ-ի Աղետների արձագանքման համակարգման եվրատլանտյան կենտրոն:

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը):

ՆԱՏՕ-ի Աղետների արձագանքման համակարգման եվրատլանտյան կենտրոնի հետևանքների կառավարման «Bosnia-Herzegovina 2017» վարժանքի հիմնական պլանավորման համաժողովին:

6. Քննարկված թեմաները:

Քննարկվել են վարժանքի սցենարը, փրկարարական աշխատանքների իրականացման համար նախատեսված աշխատանքային տեղամասերի նախապատրաստման և ընդունող երկրի կողմից Հայկական թիմին հնարավոր անհրաժեշտ աջակցության վերաբերյալ հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը:

Ներկայացվել է ս.թ. սեպտեմբերի 25-ից 28-ը կայանալի վարժանքին ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայողների մասնակցության վերաբերյալ հայտ հետևյալ բովանդակությամբ՝ քաղաքային որոնողափրկարարական թիմ – 30 հոգի,

ճառագայթային քիմիական կենսաբանական մոնիթորինգի իրականացման թիմ – 6 հոգի, ջրասուզական թիմ – 3 հոգի, ղեկավարման կազմ – 3 հոգի, գնահատողներ – 2 հոգի, միջազգային ուժերի համակարգման կենտրոն (OSOCC) – 3 հոգի, դիտորդ – 1 հոգի:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել մինչև ս.թ. հուլիսի 1-ը ՆԱՏՕ-ի Աղետների արձագանքման համակարգման եվրատլանտյան կենտրոն ներկայացնել ՀՀ ԱԻՆ թիմերի կողմից վարժանքի մասնակցության նպատակով Բոսնիա և Հերցեգովինա ուղարկվող անձնակազմի ցուցակը, գույքի ցանկը, ընդունող երկրի կողմից աջակցության հայտը և գույքի տեղափոխման համար անհրաժեշտ ծախսերի նախնական հաշվարկը՝ ՆԱՏՕ-ի կողմից ֆինանսավորում ստանալու նպատակով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:

Չկան:

10. Գործուղվողը:

փ/ծ կապիտան Կարեն Բաբասյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը:

23.05.2017